

# ԲԱՐՈՅԱԿԱՆ

## ՄՏԸԾՈՒԹԻՒՆՔ ԵՒ ՂԻՅՑՔ

ԱԽՈՒՐԵԱՆ ՎՏԱԿԻ

- Հնաստեղծ Հայր կամենալով տալ մեկնութիւն իմ անուան,  
Ասել են թէ՛ այն պատճառաւ է կոչվել սա՛ Ախուրեան,  
Որ յայնկոյս իմ կան հանդերձեալ կեանք, եւ այն նոր հայրենիք,  
Ուր չեն հասնիր կենդան մարդիկ, այլ լոկ ստուերք եւ հոգիք \*):
- բ. Հոգիք համայն վախճանելոց կը հաւարվին իմ ափուրք,  
Այլ չեն կարող անցնիլ յայնկոյս, զի յատակք իմ են անհունք.  
Մազեայ կամուրջ՝ արկեալ ընդ իս՝ մէկ երեսէն՝ դէպ ի միւս  
Անցուցանողն է Փայլածուն, ձեռին լսպտեր լուսահիւս:
- գ. Անհանդուրժ կան հոգիք այնտեղ՝ եւ Փայլածունն կսպատեն.  
Երբ կուշանայ լոյսն այն փայլի՛ անդուլ կասեն անս՛ ուր են.  
Բայց երբ կուգայ մէկին կառնու, այլ կը մնան վերստին,  
Աչօր յաւեալ դէպ միւս երես, ահ եւ կասկած ի սրտին:
- դ. Անցին արդէն այն ժամանակք, իմացուեցաւ իսկութիւն,  
Որ հանդերձեալ կեանք յայնկոյս իմ՝ չունին իւրեանց բնակութիւն.  
Բայց իմ անուն չը փոխվեցաւ, եւ թէ՛ ամենք մոռանան,  
Իմ ջուրք պիտի յաւէժ յիշեն, եւ իմ անուամբ վշտանան:
- ե. Ա՛յ տպաբէն ափանցս վերայ մերթ կառուցեալ կայր Անի,  
Պրսակազարդ՝ սարդիւք պճնեալ՝ դշտոյ Շիրակ գաւառի,  
Ա՛խ՛ ուր են արդ նորա բրդուրք, ամուր պարիսպք վիմարդեան,  
Ո՛ւր են նորա բարձր աշտարակք եւ նետակալք հրաշագան:
- զ. Ա՛խ՛ ուր են արդ բիւրք բազմութեան ժողովրդոց քաջազանց,  
Պարք փառաւոր զօրավարաց, զօրապետաց դիւջազանց.  
Ո՛ւր են անթիւ վաճառականք եւ մեծազանձ մեծատունք,  
Կալուածատեարք ճոխ եւ հարուստ՝ նեցուկք երկրի՛ հաստատունք:
- է. Ա՛խ՛ ուր են արդ տաճարք փառաց Աստուածունքեան Յիսուսի,  
Եւ քառաթեւ հրաշքարող՝ պայծառ նըշան սուրբ Խաչի,  
Որ երկնածէմ յերկինս ի վեր կը բարձրանայր՝ բազմամիւ  
Երկրպագուս ունէր ինքեան մեծահաւատ եւ անթիւ:
- ը. Ա՛խ՛ ուր են արդ ծայնք զանգակաց՝ հրաւէր սիրոյ ի տաճար,  
Ուր Գառն անմահ միշտ զենանէր՝ ի սէր մարդկան անդազար,  
Արիւն նորա ի հաշտութիւն Հօր Աստուծոյ նուիրէր,  
Եւ խունկ ուխտից ի սուրբ սեղան զանուշութեան հոտ բուրէր:

(\*) Հեղինակն Վեցաբանութեան Հայոց գրել է թէ, Ախուրեանն է Հայաստանի Սարգս զեռն, եւ Փայլածուն (կարգ-  
ժող Հայկայ Թոռն) է Քարբոն եւ փոխանակ նուակի է Մազեայ կամուրջն:

- Բ. Ա՛խ՝ ո՛ւր են դասք քահանայից՝ տարկաւագաց՝ եւ դպրաց, յանդիպոց Սուրբ զգեստուք՝ նափորտապատ, ընդ ուրարաց եւ շապկաց, Դճ՝ Կ՛Ի Ե ԿԵՆՆԱՅԸՐՈՉ զարդուք, ջահիւք, եւ լապտերօք վառելովք, Ընդ պարագլուխ Հայրապետին թափօր հանդէս ելելովք:
- Ժ. Ա՛խ՝ ո՛ւր են փառք զահի նորին՝ թաղադիտակ մխապետք, Ի Սիոնէ՛ որջունարեք Բաղրատունեանց նահապետք, Զորոց ինքն հարիւր ամօք յառաջ խօսեալ էր Սանդուխտ, Մինչ իւր եղբայր վարէր ի Պարսս տարադրական եւ պանդուխտ:
- Է. Ա՛խ՝ ո՛ւր են այն երկնահանգոյն եկեղեցիք փառաշէն, Սուր շնորհագարդ կարդ կրթօնի հանդիսանայր տիրաշէն, Մարգարէից, առաքելոց, վարդապետաց ծայնք փողոց, Որոտային զերթ ընդ երկնաւ փայլակնացայտ շանթք ամպոց:
- Ը. Ա՛խ՝ ո՛ւր են այն հրրաշակերտ բարձրացեալ բեմ եւ սեղան, Ուստի հնչէր զիւր քաղցրիկ ծայն Աւետարան Յիսուսեան, Բառնալ զխաչ եւ ընթանալ զհետ խաչակիր քաջ Հովուին, ԶՈրդոյ մարդոյ նշան շնորհաց հասուցանել մինչ յերկին:
- Թ. Ա՛խ՝ ո՛ւր են այն քաղցրանուագ Շարականաց նուրբ քերթուածք, Սրտացուցիչք հրեղէն լեզուաց հիացուցիչք յօրինուածք, Որով սուրբ Հարսն, Մայրն անարատ խօսէր ընդ անմահ Փետային, եւ ծննդոց ջամբէր ի ստեանց շիթ եւ կայրակ իւր կաթին:
- Ձ. Ա՛խ՝ ո՛ւր են այն սաղմոսերգուք որ ի դիմաց աշխարհին, Մշտամբռունչ զողորմութեան տիրական դուռն բաղխէին, Անտես չառնել զգործս ծեռաց, ուրախ առնել ընդ ամաց, Յորս տեսին զչարչարանս ի սրոյ ահեղ թշնամեաց:
- Կ. Ա՛խ՝ ո՛ւր են այն ժամերգութիւնք որ յանդիման Արարչին, Նկարէին զողորմելի վիճակ ազգին եւ երկրին, Որք նմանեալ վիրաւորաց ի զերեզմանս ննջելոց, Ոչ եւս յիշին առ ի նմանէ հանգոյն խապառ մերժելոց:
- Կ. Ա՛խ՝ ո՛ւր են այն ծայնք մունետկաց՝ եթէ յայս ինչ տաճար սուրբ, Յայս ինչ աուր հանդերձեալ է այս որ կանգնել զմիջաւորք, եւ խօսիլ յունկս ժողովրդեան զիւր ճառ չքնաղ խրատական, Օրինակօք նախնեաց ջամբել զերդ կաթն զսէր հայրենեան:
- Յ. Ա՛խ՝ ո՛ւր են այն զօրահանդէսք հետեւակաց հեծելոց, Յանդձելի զրահս ցօլունս սպառազէն վառելոց, Որոց կաճառք, վրտառք եւ զունդք որք զրանակ կազմէին, Կարմիր, կապոյտ զըրօշակաց յաղթ ծածանմամբ պատէին:
- Ն. Ա՛խ՝ ո՛ւր են արդ ծայնք այն փողոյ, որ աւետէր Հայկազանց, Թէ քաջ արանց յորս հանդերձի հեծանել ընդ վեհազանց, Ի մէջ մայրեաց լերանց Կարուց, ուր այժեմունք եւ կարաւ, Ինքնին ճեպկն վնել որսոյն եւ որսորդաց դիմազրաւ:
- Տ. Ա՛խ՝ ո՛ւր են արդ քաղաքապահ դիտանոցաց պահակերք, Յերկնադիտակ բրգանց բարձանց պահպանակիցք եւ ընկերք, Որք անընդհատ ծայնարկէին յաշտարակէ յաշտարակ:

- Յուցանել թէ ոչ է նիրհեալ, այլ յարարթուն կայ պահնակ:
- Բ. Ա՛խ՝ ո՛ւր են պարբ նուազերգուաց այգորելեաց արբային,  
Որբ յաղեղան մթնաշրթի հանգիստ բընոյ խնդրէին,  
Յորժամ եւ դէտք ըսկըսէին զձայն առնել լըսելի,  
Ի բազմամարդ քաղաք կարգալ զքաղցրիկ նիրհման հովանի:
- Գ. Ա՛խ՝ ո՛ւր են այն համարուեստից ամ ըստ ամէ տեսարանք.  
Որբ ի հեռուստ ծագաց երկրի աստ խմբէին յոգնազանք,  
Խւրաքանչիւր արհեստադէտ զիւր ցուցանել կրթութիւն,  
Զիրս յարբայէ ակնկալեալ, եւ յազգակցաց զովութիւն:
- Դ. Ա՛խ՝ ո՛ւր են այն յարախաղացք որգոստայից ի միջի,  
Ուր ազատք եւ խառնիճաղանճք կան յորմնապատ կրկիսի,  
Կամ ծիարշաւք եւ գօտեմարտք մրցանակաց ի խնդիր,  
Կամ ցցասաց, որ ի նուագս զովէր զազգ իւր եւ երկիր:
- Ե. Ա՛խ՝ ո՛ւր են այն սեղանաւորք, հատավաճառք շահասէր,  
Կամ նախարարք եւ ազգապետք, աւագորեարք զահասէր,  
Որբ ընդ Վեստեանց համակամեալ արկանէին խունկ Յունաց,  
Վաճառէին զաթուռ եւ զահ Բագրատունեաց թշուառաց:
- Զ. Ա՛խ՝ ո՛ւր են այն հայրենասէր Պահլաւունի նահատակք,  
Որոց ո՛չ գոն արդ եւ անուանց, կամ վեհ գործոց յիշատակք,  
Թէ ո՛չ միայն յարիւնալի սիրտ ազգասէր յետնորդաց,  
Կամ ի մեռեալ ծոց պատմութեան սրգաւորեալ հայրենեաց:
- Է. Ա՛խ՝ ո՛ւր են արդ ձայնք հարսանեաց, նուազարանք խնդութեան,  
Զայնք փեսայի եւ ձայնք հարսին, եւ առազաստք հարսնութեան,  
Զայնք Սիոնի անմեղ մանկանց, ներդաշնակ երգք քաղցրազին,  
Օրիորդաց պարահանդէսք եւ պճնութիւնք պանծազին:
- Ը. Ա՛խ՝ ո՛ւր են ձայնք վաճառողաց եւ զնողաց փողոցաց,  
Կամ ղօղանչիւնք ղահեկանաց, ոսկի, արծաթ, պղնձեաց,  
Արանց, կանանց խօսակցութիւնք, ծերոց տղայոց պապաջիւնք,  
Կամ աղքատաց առ անցաւորս աղէխորով կարկաչիւնք:
- Թ. Ա՛խ՝ ո՛ւր են ձայնք նախրապանաց, որբ ի ծաղիլ արեւու,  
Հնչէին մէջ որգոստայից հրաւէր եզին եւ կովու,  
Որոց անդեայք ընդ իմ կամուրջս անցանէին ի հովիտս,  
Յարօտ պարարտ մարգագետնոյն, եւ յափունս իմ բերկրառիթս:
- Ր. Ա՛խ՝ ո՛ւր են այն ձայնք ընդ երեկս մինչ ղառնային հօտք ղաշտաց,  
Կանայք աղջկունք յառաջէին ի ձեռին ղոյր կրթանաց,  
Խւրաքանչիւր զիւր կով խնդրէր, խառնեալ զկանչ, կառաչին,  
Ընդ կաթնաբեր չորրոտանեաց երախտադէտ բառաչին:
- Ս. Ա՛խ՝ ո՛ւր են արդ ձայնք քարոզաց քարձրադիտակ տեղերէն,  
Թէ այս ինչ նոր վաճառ հասեալ է հեռաւոր ինչ վայրէն,  
Կամ ծի նըժոյդ ի ծախ հանեալ կամ տուն, կամ զիւղ յաճրղի,  
Տօնավաճառ նորոգ խմբեալ յայս նիշ ղաշախ կամ հովտի:
- Ժ. Ա՛խ՝ ո՛ւր են այն ձայնք խառնաձայնք, յորժամ ի մուտս արեւուն,  
Արք աղխելով զկրպականին յերեկոյեան յայն պահուն,

- Փռնալին յայց այլ կրտակաց զընել զինի, միս եւ հաց,  
 Տանել ի տուն ի պէտս ընթրեաց զերդաստանի, ընտանեաց:
- Գ. Ա՛խ՝ ո՛ւր են արդ՝ ծայնք սայրորդաց, ճռինչք անուռոց շրջանաց,  
 Կամ շառաչիւնք սայլից, կառաց, կըռինչք բամից խուժանաց,  
 Խրխինչք ծիոց, զըռինչք իշոց, դափր եւ դոփիւնք զըրաստուց,  
 Կամ աղաղակ ազաղաղաց, կըռիչք հաւուց եւ ձագուց:
- Դ. Ա՛խ՝ ո՛ւր են յաղթ ծայնք սրնդի, հնչիւնք փողոց եւ թմբկաց,  
 Զայնք կըռանաց ոսկէգործաց, քարակոփաց եւ դարբնաց,  
 Զայնք անօժոց ճաշուց, ընթրեաց, ուրխական սեղանոց,  
 Կամ խոխոջանք լիք բաժակաց օշարակաց եւ զինուոյ:
- Ե. Ա՛խ՝ ո՛ւր են իմ կամարակապ կամուրջք ամուր տասնաւոր,  
 Ընդ որս անցորդք երթեւեկաց կըլինէին բիւրաւոր,  
 Կամ զրուեր ընդ որս ելնուտ առնէր զօրհանապագ բազմութիւն,  
 Խառնափնդոր խօսք խուժանին հանէր յերկինս զղրղիւն:
- Զ. Ա՛խ՝ ո՛ւր են այն օրիորդաց պարք համանման աղանեաց,  
 Որք մինչ յերկինս սփռէին քօղք՝ արշալուսոյն ծիրանեաց,  
 Կուժ ի ձեռին ճեպեալ առ իս առնուին ջուր զովարար,  
 Եւ ուսարար՝ դանային յետս ի զրոյց ի խօսս զուարթարար:
- Է. Ա՛խ՝ ո՛ւր են այն ծայնք պառաւանց կամ ընդոժին աղախնեաց,  
 Որք յառաւօտս կանխէին տալ հատիկս ձագուց եւ մարեաց,  
 Կամ ծառայից որք ջամբէին խոտ կամ զարի զըրաստուց,  
 Կամ մըտաղիւր լուանային զծիս ի ջուրց իմ սլուց:
- Ը. Ա՛խ՝ ո՛ւր են ծայնք հացագործաց, ծուխ հընոցաց եւ թոնրից,  
 Խոհարարաց խորտկաց հոտերն, կարկանդակաց մըսայից,  
 Ո՛ւր են զընդիւնք խուռն ամբոխին, ռաից կօշկաց ծայնք ո՛ւր են,  
 Կենդանութեան զուարթարար ցոյցք նըշանաց ան, ո՛չ են:

ՀԵՂԻՆԱԿ ՀՐԱԺԵՇՏԻՆ ՎԱՐԳԱՆԱՅ. Էջ ԵԱԵ

## Ա Ջ Գ Ա Յ Ի Ն

ՅՈՒՑԱԿ ՆՈՒՒՐԱՏՈՒԱՅ Ի ՆՊԱՍՏ ՀԻՆՈՒԹԵԱՆՑ ՄԱՅՐ ԱԹՈՒՈՅՍ.

(ՇՐՂՆԱԿՆԻՆԻՆԻ):

ՅՈՐՄԱԻՐ - ՆՈՐ:

	ՈՒ Կ՝	Նազար Իսահակեանց	25
Յովնաննէս Նազարեանց	4	Գասպար Շահվերդեանց	4
Պետրոս Ալանվերդեանց	50	Նիկողայոս Գումշահեանց	4
Աւետիք Զուպարեանց	4	Արրահամ Ալանվերդեանց	4
Մահտեսի Գէորգ Ճանահեանց	4	Տալ Ալանվերդեանց	4
Խաչատուր Գասպարեանց	20	Պօղոս Ալվազեանց	4
		Սարգիս Կիրակոսեանց	20